

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 16.11.2022թ. չորեքշաբթի թիվ 48 (1073)

Պարույր ՍԵՎԱԿ

Բարի լուր

Եղիցի լույս


Ձայնիվ երկրորդ առ Տեր կարդամ

Թողություն տուր, Տեր, ծանրը հավարին,
 Միայն թե թող Նա թողնի հեռանա:
 Թող ծառերն անգամ (առանց եւ քամու)
 Հարգանքով Նրա առջեւ կեռանան,
 Միայն թե թող Նա թողնի հեռանա:
 Մենք պահանջ չունենք,
 Մենք գոհ ենք նույնիսկ,
 Միայն թե թող Նա թողնի հեռանա:
 Մենք խոստանում ենք,
 Եվ մենք իսկապես
 Նրան չենք կարող ու չենք մոռանա,
 Միայն թե թող Նա թողնի հեռանա...

Իսկ թե հարկ լինի, նամանավանդ պետք,
 Ես հավարի հետ կմեկնեմ Ինքքս՝
 Դառնալով Նրա թագավորության
 Հին Հպատակն ու նոր Քաղաքացին՝
 Անդարծ կմեկնեմ հավարի հետ Ես,
 Միայն թե մեր այդ մեկնումից հետո
 Ժամանի ինքը Արշալու՛յսը,
 Գա՛,
 Ու եթե մի քիչ տխրի, որ չկամ,
 Բայց մի քիչ հետո
 Եվ ուրախանա՛, որ իմ կորստով
 Կորել է նաև ինքը հավարը...

Արշալու՛յսը գա,
 Եվ իր կտրված պորտից պոկվելով՝
 Նորածին օրը ալ-կարմիր շնչի
 Եվ ինքն էլ զգա,
 Որ իր այդ շնչով խոնավ ու տաքուկ
 Այնպես է լցվում աշխարհը կրկին,
 Ինչպես տկճորը արնագույն գինով,
 Եվ այդ լցումի թրթիռը հսկա
 Մանրիկ անցնում է մեր իսկ ներքինով՝
 Իբրեւ մի սարսուռ,
 Որ մեզ կապում է անտես կապերով
 Աստվածների հետ,
 Դարձնում նրանց հետ մեզ հարաբերող,
 Բայց եւ առնչում մեզ օվկիաններին,
 Որոնց անվախճան ու տարուբերող
 Մակընթացություն-տեղատրվությունն
 Այլ բան չէ արդեն,
 Քան թե աննշան մեր զարկերակի
 Նշանակալից արձագանքը մեծ
 Մեզնից սկսվող տարածության մեջ...

17.03.1967 թ., Արզնի



Մարիամ Սկրտչյանը՝ շախմատի Եվրոպայի չեմպիոն

Թուրքիայի Անթալիա քաղաքում ընթացող շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնության նախավերջին՝ 8-րդ տուրում Հայաստանի ներկայացուցիչ **Մարիամ Սկրտչյանը** առավելության է հասել իռլանդացի **Տրիշա Կանյամարալայի** նկատմամբ եւ ժամանակից շուտ նվաճել Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

Վերջին տուրից առաջ Սկրտչյանը վաստակել է 7,5 միավոր եւ անհասանելի դարձել մրցակիցների համար:

Հայաստանի գործող չեմպիոն Մարիամ Սկրտչյանն այս տարի՝ ավելի վաղ, նվաճել էր նաեւ աշխարհի մինչեւ 18 տարեկանների չեմպիոնի կոչումը՝ հաղթելով բոլոր 11 պարտիաներում:

Մինչեւ 18 տարեկան պատանիների մրցաշարում Հայաստանի ներկայացուցիչ **Մամիկոն Դարիբյանը** 6 միավոր ունի իր ակտիվում եւ կիսում է 3-5-րդ տեղերը: 8-րդ տուրից առաջ Դարիբյանը Ռուսաստանը ներկայացնող հայ շախմատիստ **Ռուդիկ Մակարյանի** հետ զլխավորում էր աղյուսակը, սակայն նախավերջին տուրում զիջեց Մակարյանին՝ գործնականում զրկվելով չեմպիոնության համար պայքարելու հնարավորությունից: Մակարյանն այժմ միանձնյա առաջատարն է 7 միավորով:

Մինչեւ 16 տարեկան պատանիների մրցաշարում մրցաշարային աղյուսակի առաջատարներից է **Էմին Օհանյանը**: Նա նախավերջին տուրում հաղթել է միանձնյա առաջատար լեհ **Յան Մալեկին** եւ այժմ 6,5 միավորով կիսում է 1-5-րդ տեղերը: Նոյեմբերի 14-ին կանցկացվեն Եվրոպայի պատանեկան առաջնության վերջին՝ 9-րդ տուրի պարտիաները:



ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

Ատենախոսության պաշտպանություն՝ Գրոնինգենի համալսարանում

Հայ-Ռուսական համալսարանի շրջանավարտ **Հերմինե Բերբերյանը** Նիդերլանդների Գրոնինգենի համալսարանում պաշտպանել է «Իմացական-ճանաչողական (կոգնիտիվ) փուլերի հայտնաբերում եւ հոգեվերլուծություն. տարբեր առաջադրանքներում հիմնական փուլերի հայտնաբերում՝ մեքենայական ուսուցման կիրառմամբ, որը կիրառվում է EEG-ի եւ MEG-ի համար» (Cognitive Stage Detection and Interpretation: Discovering the Underlying Stages in Various Tasks Using Machine Learning Applied to EEG and MEG) թեմայով թեկնածուական ատենախոսությունը (PhD):

Անդրադառնալով իր թեկնածուական թեզին՝ նա պարզաբանել է, որ իր ատենախոսական հետազոտությունը հոգեբանության, ներդրողական, մաթեմատիկայի եւ մեքենայական ուսուցման մի յուրօրինակ սիմբիոզ է: «Ստացված արդյունքները կարող են օգտագործվել տարբեր ոլորտներում. օրինակ՝ տարբեր փաստերի ուսուցման արդյունավետությունը բարելավելու համար կամ հնարավոր է նկարագրել ավելի արդյունավետ կամ պակաս արդյունավետ ուսուցման փուլերը: Իսկ հետագայում նաեւ հնարավոր է օպտիմալացնել ուսումնական ծրագիրն՝ ավելի արագ կամ երկարաժամկետ մտապահման համար», - նշել է Բերբերյանը:

Նա շեշտել է, որ իր ուսումնառությունը Հայ-Ռուսական համալսարանում միանշանակ օգնել է իր կայացմանը եւ նպաստել հաջողություններին: «ՀՌՀ-ն գիտելիքների ամուր հիմք է դրել հոգեբանության տարբեր ոլորտներում, որը թույլ է տալիս հանգիստ սովորել եւ աշխատել տարբեր երկրներում: Ինձ շատ օգնեցին նաեւ հարազատ բուհում մաթեմատիկայի, ծրագրավորման եւ օտար լեզուների գծով ստացած գիտելիքները», - ընդգծել է Հերմինե Բերբերյանը՝ հավելելով, որ ՀՌՀ-ի ռեկտոր, պրոֆեսոր **Արմեն Դարբինյանի** դասախոսությունների ընթացքում ստացած կարեւոր արժեքային հիմքերը նպաստել են իր անձնային զարգացմանը եւ կրեատիվ մտածողությանը:

Գրոնինգենի համալսարանը հիմնադրվել է 1614 թվականին եւ դասվում է աշխարհի լավագույն համալսարանների շարքին (66-րդն է Academic Ranking of World Universities վարկանիշում, 75-րդը՝ World University Rankings 2023-ում):



ՀՌՀ մամուլի ծառայություն

Այս համարում

- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ ժաննա ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ հետ հարցազրույցը՝ մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի խնդիրների շուրջ

տե՛ս՝ էջ 4-5

Նախագիծ

Շրջանավարտներին հնարավորություն կտրվի քննություն հանձնել երկու անգամ. վերջնական կհամարվի լավագույն արդյունքը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պետական ավարտական քննությունների ժամանակացույցը և աշխատակարգը սահմանելու մասին ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծը:

Աշխատակարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարաններում ավարտական և 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը:

4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.

- «Մայրենի» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար նաև՝ «Ռուսաց լեզու» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.

- Ազգային փոքրամասնությունների դասարաններում նաև՝ իրենց մայրենի լեզու և գրականություն առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.

- Ազգային փոքրամասնությունների դասարաններում նաև՝ իրենց մայրենի լեզու և գրականություն առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

Գիտելիքների ստուգման առաջադրանքների թեստերը (առնվազն 4 տարբերակ) կազմում են հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված մոդուլների: Ըստ դասարաններում գիտելիքների ստուգումն անցկացվում է հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 15 օրվա ընթացքում:

9-րդ դասարանի սովորողները հանձնում են ավարտական քննություններ.

- «Հայոց լեզու» առարկայից՝ գրավոր թեստ.

- «Գրականություն» առարկայից՝ բանավոր.

- «Հայոց պատմություն» առարկայից՝ բանավոր.

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր.

- «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ բանավոր.

թյամբ) առարկայից՝ բանավոր.

- «Ֆիզիկա» առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում).

- Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար սահմանված գիտելիքների ստուգումն անցկացվում է նաև «Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.

- Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար անցկացվում է նաև գիտելիքների ստուգում «Մայրենի լեզու և գրականություն» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

«Գրականություն», «Հայոց պատմություն» և «Օտար լեզու» առարկաների 9-րդ դասարանների ավարտական քննությունների տոմսերը կազմում են հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված և տրամադրված հարցաշարերի և տոմսերի մոդուլների:

«Գրականություն» և «Օտար լեզու» առարկաների ավարտական քննական առաջադրանքների հարցաշարերը և տոմսերի մոդուլները կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, «Հայոց պատմություն» առարկայի քննական առաջադրանքները՝ 6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:

9-րդ դասարաններում ավարտական քննություններն անցկացվում են հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում: 9-րդ դասարանի ավարտական քննություններ հանձնողների հայտերը հաստատության տնօրենը լրացնում է ԳԹԿ-ին մարտի 15-ը:

12-րդ դասարանում շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ.

- «Հայոց լեզու» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Ֆիզիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Քիմիա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Կենսաբանություն» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Ֆիզիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Քիմիա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Կենսաբանություն» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Ֆիզիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Քիմիա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Կենսաբանություն» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Ֆիզիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Քիմիա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Կենսաբանություն» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Ֆիզիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Քիմիա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Կենսաբանություն» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

տերը հաստատության տնօրենը լրացնում է ԳԹԿ-ին է փոխանցում փետրվարի 20-ից մինչև մարտի 15-ը:

12-րդ դասարանում շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ.

- «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Հայոց պատմություն» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

- «Ֆիզիկա» առարկայից՝ նորմատիվների հանձնում (ստուգաթղթ)՝ հունիսի 6-րդ աշխատանքային օրվանից մինչև քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում,

- «Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր՝ (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար)՝ սովորողի ընտրությամբ՝ քննաշրջանի ընթացքում.

- «Մայրենի լեզու և գրականություն» առարկայից՝ բանավոր՝ (ազգային փոքրամասնությունների դասարանների համար)՝ սովորողի ընտրությամբ՝ քննաշրջանի ընթացքում:

12-րդ դասարաններում պետական ավարտական քննություններն անցկացվում են հունվարի երկրորդ շաբաթվա առաջին աշխատանքային օրվանից՝ 10 օրվա ընթացքում և հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում:

12-րդ դասարանի սովորողը հունվար

ամսին կարող է հանձնել այն առարկայի(ների) պետական ավարտական քննությունը(ները), որը(որոնք) չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում:

Հունվարին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև դեկտեմբերի 10-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին. հեռավար ուսուցման դեպքում կարելի է դիմել էլեկտրոնային փոստով:

Հաստատության տնօրենը դեկտեմբերի 15-ից մինչև 30-ը՝ ժամը 12:00-ը, քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ-ին:

Հունիսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև ապրիլի 1-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենն ապրիլի 1-ից մինչև մայիսի 2-ը ներառյալ՝ քննություններ հանձնողների դիմում-հայտերն էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ-ին:

Միասնական քննությանը մասնակցող սովորողը պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել այն առարկա(ներ)ից, որ(ոնք) չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: Ե՛վ հունվարին, ե՛լ հունիսին միասնական քննություններ հանձնած սովորողի ավարտական փաստաթղթում լրացվում է միասնական քննության ավարտական մասի ավելի բարձր դրական գնահատականը:

Միևնույն առարկայից ե՛լ միասնական, ե՛լ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):

9-րդ և 12-րդ դասարանում ավարտական և պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմում է ԳԹԿ-ն, առաջադրանքներն ընտրվում են ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից և հաստատությունում գործածվող դասագրքերից և (կամ) ձեռնարկներից:

12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

Միևնույն առարկայից ե՛լ միասնական, ե՛լ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):

9-րդ և 12-րդ դասարանում ավարտական և պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմում է ԳԹԿ-ն, առաջադրանքներն ընտրվում են ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից և հաստատությունում գործածվող դասագրքերից և (կամ) ձեռնարկներից:

12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

12-րդ դասարանի սովորողը հունվար



Յեղիսե ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Հանրային քննարկման է ներկայացվել ուսուցչի հերթական ատեստավորման կարգը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորման և տարածքային հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգերի նախագիծը:

Ատեստավորումն ուսումնական հաստատությունում զբաղեցրած պաշտոնին ուսուցչի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային կարողությունների և հմտությունների համապատասխանության որոշման գործընթացն է:

Ուսուցչի ատեստավորման ամբողջական շրջափուլը հինգ տարի է, որը բաղկացած է յուրաքանչյուր տարվա վերապատրաստման բաղադրիչների միջոցով չափաբանակից: Ատեստավորումն իրականացվում է պարզ ընթացակարգով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սահմանած՝ ուսուցչի ատեստավորման կարգի և անցկացման ժամկետի մասին:

խարարության սահմանած՝ ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա:

Ուսուցչի ատեստավորումն իրականացվում է ՀՀ մարզերում, Երեւան քաղաքում, նախարարության ենթակայության ուսումնական հաստատությունների համար՝ նախարարությունում, փաստաթղթային ատեստավորման եղանակով՝ ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովի կողմից:

Ատեստավորման ենթակա ուսուցչին հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենն ատեստավորումից ոչ ուշ, քան երեք ամիս առաջ գրավոր ծանուցում է փաստաթղթային ատեստավորման, կարգի և անցկացման ժամկետի մասին:

Յուրաքանչյուր ուսուցչի վերաբերյալ ատեստավորման հանձնաժողովն անհատական քվեարկության միջոցով, ձայների մեծամասնությամբ, ընդունում է օրենքով սահմանված որոշումներից մեկը: Ատեստավորվող ուսուցչին իրավունք ունի ներկա գտնվելու իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանության մասին հարցի քննարկմանը և որոշման ընդունմանը:

Ատեստավորման հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով՝ նախարարություն կամ դատական կարգով:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովների գործունեության նպատակը հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով, ատեստավորում իրականացնելն է: Ատեստավորման հանձնաժողովները երեք տարի ժամկետով և հասարակական հիմունքներով գործող մարմիններ են:

Հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից: Ատեստավորման հանձնաժողովները

ձեւավորվում են նախարարի հրամանով՝ տվյալ տարածքային կառավարման մարմնի ղեկավարի՝ մարզպետի, Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետի առաջարկության հիման վրա:

Ատեստավորման հանձնաժողովների կազմում կարող են լինել հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնակավորժներ, լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի, Երեւանի քաղաքապետի ներկայացնելու դեպքում համապատասխան վարչական շրջանի և նախարարության աշխատողները:

Ատեստավորման հանձնաժողովների անդամների թեկնածուների ամբողջական անվանացանկը կարող է համարվել ևս փոփոխվել առաջադրող մարմինների կամ կազմակերպությունների հիմնավորված առաջարկությամբ, իսկ անհատների դեպքում՝ իրենց դիմումով:

Յ. ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Մշակույթ

Վանաձորի տիկնիկային թատրոնը նշել է հիմնադրման 30-ամյակը

ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Վանաձորի համայնքապետարանի աջակցությամբ՝ հանդիսավորությամբ նշվել է Վանաձորի տիկնիկային թատրոնի հիմնադրման 30-ամյակը:

Թատրոնի հոբելյանին նվիրված միջոցառմանը ներկա էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Դովնան Եպիսկոպոս Գալոբյանը, Վանաձորի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արկադի Փելեշյանը, Լոռու փոխմարզպետ Գոռ Ասրյանը, Երեւանի պետական տիկնիկային թատրոնի անձնակազմի ներկայացուցիչներ, դերասաններ, մտավորականներ:

Հոբելյանական միջոցառման շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային ծրագրով թատրոնի ճեմասրահում բացվել է թանգարանային հատված, որտեղ ներկայացված են թատրոնի 30-ամյա տարեգրությունը՝ խաղացանկում տեղ գտած ներկայացումները, առաջին տիկնիկներն ու տարբեր տարիների ձեռքբերումները:

Հոբելյանական միջոցառման ընթացքում շնորհավորական խոսքով հանդես է եկել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը՝ ընդգծելով, որ Վանաձորի տիկնիկային թատրոնը բարոյական սիրագործության,



բացառիկ մասնագիտական նվիրումի և բարձր քաղաքացիական գիտակցության դրսևորում է խորհրդանշիչ է:

«Տիկնիկային թատրոնն ավելին է, քան մասնագիտությունը, եւ ավելին, քան արվեստը: Տիկնիկային արվեստի գործիչները երեւի թե այն միակ մասնագետներն են,

որոնց կարելի է համեմատել ուսուցիչների հետ՝ իրենց կարելությունը եւ հասարակական նշանակությամբ: Այն, ինչ արել է թատրոնի նախկին տնօրեն պարոն Մելիքյանը, արժանի է հիացումի եւ խոնարհումի: Ես հիշում եմ 90-ականների խավար, ցուրտ, դժնդակ օրերը, եւ մեր՝ երեխաներիս համար

սա այն եզակի կղզիներից էր, որը թույլ էր տալիս տեսնել, շփվել այլ միջավայրի, այլ զգացմունքների, առօրյա խոսակցություններից ու հոգեբանական հեռու այլ իրականության հետ»,- նշել է նախարարի տեղակալը:

Թատրոնի տնօրեն Սեւակ Սարգսյանը ներկայացրել է թատրոնի անցած ճանապարհը եւ առաջիկա անելիքները:

Այնուհետեւ օրհնության խոսք է ասել Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Դովնան Եպիսկոպոս Գալոբյանը:

Վանաձորի համայնքի ղեկավար պաշտոնակատար Արկադի Փելեշյանը շնորհավորել է ներկայից թատրոնի հոբելյանի առթիվ եւ նշել, որ մոտ ապագայում տիկնիկային թատրոնը կունենա նոր շենքային պայմաններ:

Միջոցառման ընթացքում Վանաձորի կամերային նվագախումբը հանդես է եկել կատարումներով: Ցուցադրվել են նաեւ հատվածներ թատրոնի խաղացանկի լավագույն ներկայացումներից:

Հոբելյանի կապակցությամբ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի հրամանով թատրոնի հիմնադիր Սերյոժա Մելիքյանը եւ տիկնիկավար-դերասան Սուսաննա Մարջարյանը պարգևատրվել են շնորհակալագրերով:

«Ավրորայի լուսաբացը»՝ լավագույն անիմացիոն ֆիլմ

«Ավրորայի լուսաբացը» ֆիլմը «Ասիա-խաղաղօվկիանոսյան էկրանավորման» մրցանակաբաշխության («Asia Pacific Screen Award») «Լավագույն անիմացիոն ֆիլմ» անվանակարգում արժանացել է մրցանակի:

«Լավագույն անիմացիոն ֆիլմ» անվանակարգում մրցել է 5 ֆիլմ: Այս չափազանց բարձրակարգ կինոստուդիաներից Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում «Օսկարին» համարժեք մրցանակաբաշխություն է, որտեղ ընտրվում են մրցանակի են արժանանում լավագույն ֆիլմերը:

«Արշալույսի լուսաբացը» ֆիլմը վավերագրում է Արշալույս Մարտիկյանի (Ավրորա Մարդիգանյան) կյանքի ողիսա-

կանը. Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած դեռատի աղջիկը գորավար Անդրանիկի եւ «Մերձավոր Արեւելքում ամերիկյան օգնության կոմիտեի» աջակցությամբ փրկություն է գտնում ԱՄՆ-ում: Ֆիլմում վերականգնվել է օգտագործվել են 1919 թվականին Հոլիվուդում նկարահանված «Հոգիների աճուրդ» համը ֆիլմից հատվածներ, որտեղ Արշալույսը մարմնավորում է ինքն իրեն նպատակ ունենալով ֆիլմի հասույթն ուղղել ցեղասպանության հետեւանքով որբացած հայ մանուկների փրկությանը: Ֆիլմը դառնում է «Մերձավոր Արեւելքում ամերիկյան օգնության կոմիտեի» բարեգործական արշավի հիմնաքարը, որը, ընդհանուր առմամբ, հավաքում է ավե-

լի քան 116 մլն դոլար, ինչի արդյունքում ավելի քան 132 հազար հայ որբեր խնամք են ստանում:

«Արշալույսի լուսաբացը» ֆիլմը հիմնված է իրական մարդու իրական պատմության վրա, միեւնույն ժամանակ փոխանցում է ժամանակի ընդհանուր նկարագիրը: Այն հերոսուհու երկու եզակի վավերագրական հարցազրույցների, «Հոգիների աճուրդ» համը ֆիլմի պահպանված կտորների, արխիվային նյութերի եւ անիմացիոն գեղագիտական լուծումների համադրությունն է:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Հայաստանի ազգային կինոկենտրոնի աջակցությամբ նկարահանված «Արշալույսի լուսաբացը»

վավերագրական-անիմացիոն ֆիլմը Հայաստանի, Գերմանիայի եւ Լիտվայի համատեղ արտադրություն է (արտադրող ընկերություններ՝ «Բարս մեդիա», «Gebrueder Beetz Filmproduktion», «Artbox Laisvalaikio Klubas»): Կինոնկարը աջակցություն է ստացել նաեւ Եվրոպական ամենախոշոր կինոֆոնդից՝ «Եվրոմեդի» (Հայաստանը որպես մեծամասնական համարտադրող): Ֆիլմը ստեղծվել է Ջորջան ինստիտուտի գիտական աջակցությամբ եւ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության արխիվի հիման վրա: Ռեժիսորը եւ սցենարի հեղինակը Իննա Սահակյանն է. պրոդյուսերներ՝ Վարդան Հովհաննիսյան, Քրիստիան Բից, Յուստե Սիխալինայտե:

Երիտասարդական

Ի նպաստ քաղաքացիական ակտիվության

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը մասնակցել է «Ակտիվ քաղաքացիության լաբորատորիա» միջոցառման շրջանակում կազմակերպված «Երիտասարդների ակտիվ քաղաքացիություն» թեմայով պանելային քննարկմանը, որն անցկացվել է «Եվրոպական երիտասարդական պառլամենտ-Հայաստան» կազմակերպության 10-ամյակին ընդառաջ՝ Schwarzkopf Stiftung Junges Europa-ի եւ Alfred Herrhausen Gesellschaft-ի հետ համագործակցությամբ:


Պանելային քննարկմանը մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության, Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ եւ կրթության փորձագետ Արման Գասպարյանը: Միջոցառմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետ Ջարա Ասլանյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը, շնորհավորելով ԵԵԴ-ի 10-ամյակը, նշել է, որ երիտասարդության կյանքը մշտապես պետական աջակցության եւ ուշադրության կենտրոնում է երիտասարդական քաղաքականության մշակման եւ իրագործման մեջ կարեւորելով երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու մասնակցայնությունը որոշումների կայացման գործընթացում: «Երիտասարդական պետական քաղա-

քականության հիմքում յուրաքանչյուր երիտասարդի ներուժի բացահայտումն ու իրացումն են, հնարավորություններն ու կարողունակությունների զարգացումը, երիտասարդության ինքնահաստատման եւ ինքնադրստեղծման համար նպաստավոր միջավայրի ձեւավորումը: Ակտիվ քաղաքացիների ձեւավորելը պետության առաջնահերթություններից մեկն է»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալի խոսքով պետական քաղաքականության առանցքային շեշտադրում է մարզաբնակ երիտասարդների ներգրավվածության ապահովումը, նրանց համար կարողությունների զարգացման, մշակութային միջավայրի, ժամանցի կազմակերպման նույն հնարավորությունների ընձեռումը՝ անկախ բնակության վայրից: Դրան է միտված մարզերում երիտասարդական կենտրոնների հիմնումը՝ որպես մի հարթակ, որտեղ երիտասարդները կմեկտեղվեն, կքննարկեն համայնքային միջին մարզային, համապետական խնդիրներ իրենց իսկ իրականությունը փոխակերպելու եւ լուծումներ առաջ քաշելու տրամաբանությամբ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը տեղեկացրել է, որ պետական բյուջեի միջոցներով առաջիկայում նախատեսվում է երիտասարդական կենտրոն հիմնել Մեղրիում եւ Իջևանում, իսկ մինչեւ 2026 թվականը ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով միայն պետական բյուջեի միջոցներով



Հայաստանի մարզային բնակավայրերում այդպիսի կենտրոնների թիվը նախատեսվում է հասցնել 25-ի. «Լավատեսություն են հայտնում, որ պետական բյուջեի, նաեւ միջազգային եւ այլ գործընկերների, այդ թվում եւ մասնավոր ոլորտի հետ համագործակցությամբ առաջիկա 5 տարում Հայաստանի մարզերում կունենանք տասնյակ երիտասարդական կենտրոններ: Այդպիսի կենտրոններում երիտասարդները կկարողանան կազմակերպել իրենց ինտելեկտուալ ժամանցը, տեղեկացված կլինեն իրենց համայնքի խնդիրներից եւ կներգրավեն դրանց

լուծման գործընթացներում, կզարգացնեն իրենց հմտություններն ու ունակությունները՝ որպես իրավագիտակից եւ պատասխանատու քաղաքացիներ»:

Արթուր Մարտիրոսյանը պատասխանել է նաեւ երիտասարդներին հուզող հարցերին նշելով, որ առաջիկայում նախարարությունը նախատեսում է երիտասարդական խնդիրների համապարփակ վերլուծություն, ինչի արդյունքում կմշակվի նաեւ «Երիտասարդության մասին» օրենքի նախագիծը, որը 2023 թվականի նոյեմբերին կներկայացվի Ազգային ժողով:

Մասնագիտական կրթություն և ուսուցում

Որպեսզի յուրաքանչյուրի դերը և առաքելությունը լինի իմաստավորված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա ԱՆՂՐԵԱՅԱՆԸ համակարգում է հանրակրթության և նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթության ոլորտները: Ավանդաբար, տիկին Անդրեասյանը հանրային հարթակներում հանդես է գալիս հանրակրթության մասին հարցազրույցներով, հայտարարություններով, պարզաբանումներով ու մեկնաբանություններով: Մենք այս անգամ Ժաննա Անդրեասյանի հետ զրուցել ենք ՄԿՈՒ ոլորտի խնդիրների շուրջ:

Ժաննա Անդրեասյանի գնահատմամբ՝ մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտը, չնայած իր մեծ պոտենցյալին, բավարար չափով գնահատված չէ...

— Կրթության միջին 2030 թվականը զարգացման ծրագրում մենք արդեն հստակ ամրագրել ենք մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի դերը՝ որպես մեր հասարակության փոփոխվող պահանջներին, աշխատաշուկայի և տնտեսության կարիքներին արձագանքելու ամենաէֆեկտիվ միջոց: Այսինքն՝ ՄԿՈՒ-ն դառնում է այն հիմնական օղակը, որտեղ մենք կարող ենք ավելի ճկուն ու արագ արձագանքել այն բոլոր փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տնտեսության կառուցվածքում և հանրային զարգացման տրամաբանության մեջ:

— Տիկին Անդրեասյան, ըստ Ձեզ, որո՞նք են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության առավելությունները:

— Վստահ եմ, որ այս համակարգն ունի մի շարք առավելություններ, որոնք պետք է օգտագործենք՝ հիմք ստեղծելով նաև հետագայում հետազոտական բաղադրիչի ներդրման համար, որն արդեն բուհական համակարգի խնդիր է: ՄԿՈՒ համակարգի կարելիորակում առավելությունը հասանելիությունն է: Մասնագիտական կրթությունը ամենահասանելին է թե՛ ֆիզիկական հասանելիության իմաստով, որովհետև մեր հաստատությունների ցանցը ընդգրկում է ամբողջ հանրապետությունը և թե՛ նաև սոցիալական հասանելիության իմաստով: ՄԿՈՒ համակարգում անվճար տեղերը ուսուցման ընդհանուր համակարգում ավելին քան 70 տոկոս են կազմում, արհեստագործական ծրագրերի պարագայում այդ ցուցանիշը նույնիսկ 90 տոկոսից ավելի է: Իսկ վճարովի տեղերի համար վարձավճարները շատ ավելի հասանելի են:

— Որոշակի մրցակցություն է ձևավորվել ավագ դպրոցների և ՄԿՈՒ հաստատությունների միջև: Ավագ դպրոցների տնօրենները «հակառակորդ» են համարում քոլեջներին, և հակառակը... Ձեր կածիքով այս մրցակցությունը, ինչպես հանրակրթությունում, այնպես էլ ՄԿՈՒ ոլորտում, նպաստո՞ւ է կրթության որակի բարձրացմանը:

— Ընդհանրապես, տեսության մեջ մրցակցությունը միշտ նպաստում է որակի բարձրացմանը և համարվում է զարգացման հիմքը: Այստեղ ինձ թվում է՝ կարելի է պահել շեշտադրումը, որովհետև ՄԿՈՒ համակարգում մենք լուծում ենք մասնագետ պատրաստելու խնդիր, իսկ ավագ դասարաններում լուծում ենք այլ խնդիր:

Իհարկե, սրանք երկուսն էլ վերաբերում են նույն տարիքային խմբերի կրթությանը, բայց ամեն դեպքում ավագ դպրոցի խնդիրը հանրակրթությունն ապահովելն է, որը մասնագիտական որակավորում չէ:

Մենք պետք է կարողանանք հանրության մեջ, առաջին հերթին սովորողների և նրանց ծնողների շրջանում, արմատավորել այն ընկալումը, որ մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտը առանձին, ինքնաբավ կրթական համակարգ է՝ որեւէ մեկի կցորդը չէ:

— Կրթության զարգացման միջին 2030 թվականը ծրագրի մեջ հավակնոտ ցուցանիշ կա: ՄԿՈՒ շրջանավարտների միջին 90 տոկոսի ներգրավվածությունն աշխատաշուկայում: Արվե՞լ է արդյոք վեր-

լուծություն. նման բարձր ցուցանիշ աշխարհի որեւէ երկրում կա՞, և հնարավո՞ր է այդ թիրախային ցուցանիշն ապահովել:

— Իրոք, շատ հավակնոտ ցուցանիշ է, բայց միայն այդ թիրախը չէ, որ հավակնոտ է: Ընդհանուր առմամբ կրթության միջին 2030 թվականի զարգացման պետական ծրագրի բոլոր թիրախները շատ հավակնոտ են: Օրինակ՝ պետք է ունենանք չորս բուհ միջազգային վարկանշային սանդղակի հինգհարյուրյակում, կրթական արդյունքների գնահատման միջազգային ԹԻՄՍ համակարգում պետք է կարողանանք ապահովել միջինից բարձր մակարդակ...

Նպատակ չի եղել սահմանել այնպիսի թիրախներ, որոնց հնարավոր է հասնել ինտեգրոն սկզբունքով. օրինակ՝ գիտենք, որ ՄԿՈՒ հաստատությունների շրջանամակարտների մասնագիտությամբ զբաղվածության տոկոսն այսօր մոտ 43-45 տոկոս է: Կարելի է ենթադրել, որ եթե այս տեմպերով գնանք, միգուցե ցուցանիշը կհասնի 60-70 տոկոսի: Խնդիր է դրված սահմանել այնպիսի թիրախ, որը հետադարձ տրամաբանության մեջ համակարգում կբերի որակական ու շեշտակի փոփոխություններ: Այսինքն՝ ծրագրի այդ նպատակներն ավելի շատ ծառայում են որպես փոփոխությունների ուղեւորներ: Դա նշանակում է՝ հստակ փոփոխություններ, դա նշանակում է՝ վերանայել մեր մասնագիտությունների ցանկերը, հասկանալ, թե որ մասնագիտություններով կարիք ունենք մեծացնելու ընդունելությունը և որոնցով պետք է հրաժարվենք կրթություն կազմակերպել:

Կան մասնագիտություններ, որոնց նույնիսկ անվանումից պարզ չէ, թե մարդիկ հետո ինչ են անելու, կամ արդյոք դա ՄԿՈՒ ոլորտի մասնագիտություն է, և արդյոք ընդհանրապես այդ մասնագետների կարիքն այսօր կա: Եթե մենք կարողանանք ուսուցման տեղերը շատ ավելի թիրախային պլանավորել, եթե կարողանանք շատ ավելի թիրախային ֆինանսավորում իրականացնել և ունենալ նաև ամբողջությամբ պետության ֆինանսավորմամբ հաստատություններ, ինչը նույնպես ամրագրված է կրթության զարգացման ծրագրում, ապա Ձեր նշած խնդիրը անլուծելի չի լինի:

— Խոսվում է նաև ՄԿՈՒ հաստատությունների քարտեզ ունենալու մասին. ի՞նչ խնդիր է լուծվելու դրանով:

— Մենք պետք է ունենանք հաստատությունների քարտեզը. այն հաստատությունների, որոնք ունեն հանրապետական նշանակություններ և այն հաստատությունների, որոնք ավելի լոկալ տնտեսական կարիքներ են սպասարկում տվյալ տարածաշրջանի, տվյալ տարածքի համար: Հաստատությունների նկատմամբ՝ ըստ իրենց տեսակի՝ հանրապետական և տարածքային, ֆինանսավորման և կառավարման նպատակային մոտեցում է ցուցաբերվելու: Մենք ունենք ՄԿՈՒ հաստատություններ, որոնք կարող են կարգավոր պատրաստել ամբողջ հանրապետության համար, և այդ հաստատությունների ֆինանսավորման տրամաբանությունը, նրանց հանդեպ մոտեցումը պետք է տարբերակված լինի:

Օրինակ՝ մենք ունենք Գյումրիի տեխնիկական քոլեջը, որը երկաթուղային գործի մասնագետներ պատրաստող միակ հաստատությունն է: Բնականաբար, պետք է ունենանք համապատասխան հանրակա-



ցարանային կամ կեցության պայմաններ, որ այնտեղ նաև այլ բնակավայրերից կկարողանան գալ և սովորել: Պետք է նաև հնարավորություն ունենանք մասնագիտությունում ներգրավել դասախոսներ ամբողջ հանրապետությունից: Բնականաբար, պետությունը պետք է կարողանա տարբերակված քաղաքականություն վարել՝ հաշվի առնելով հաստատությունների մասնագիտական առանձնահատկություններն ու ուղղվածությունը: Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ ունենալու ենք ՄԿՈՒ հաստատությունների քարտեզը, որտեղ յուրաքանչյուր հաստատության դերը և առաքելությունը իմաստավորված է, որտեղ մասնագիտությունների ցանկերը հստակ պլանավորված են:

Պետք է գնանք հաստատությունների մասնագիտացման ծանապարհով: Այսինքն՝ հաստատությունները պետք է արոճիլային դառնան՝ յուրաքանչյուրը կրթություն իրականացնի 2-4 մասնագիտությամբ, բայց ունենա ամբողջական պայմաններ այդ կրթությունը որակյալ կազմակերպելու համար:

Այդ դեպքում, կարծում եմ, նշված ցուցանիշները կարող են էսպես փոխվել: Դե-տեաբար, վերը նշված 90 տոկոս ընդգրկվածությունը աշխատաշուկայում մի կողմից հավակնոտ թիրախ է, մյուս կողմից այդ թիրախը մեզ ստիպում է գործել:

— Մասնագիտությունների պլանավորման համար ՄԿՈՒ համակարգը պետք է ունենա աշխատուժի զարգացման միտումների վերաբերյալ հետազոտություն: Պիտի հասկանալ՝ 5 տարի հետո, 10 տարի հետո շուկան ինչ պահանջներ է դնելու, որ նախապես սկսենք մասնագետներ թողարկել: Ի վերջո, մասնագիտական կրթական ծրագիր ներմուծելը նաև պարզ է, որը փուլեր է և ժամանակ է պահանջում: Նման հետազոտությունն ունենք:

— Պլանավորումը բարդ խնդիր է: Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից նման հետազոտություններ իրականացվում են: Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում ամեն տարի քննարկում ենք ներդրվելիք մասնագիտությունների ցանկերը, չափորոշիչների վերանայման կարիք ունեցող մասնագիտությունների ցանկերը, որոնք բխում են այդ ուսումնասիրություններից: Առաջարկները ձևավորվում են ուսումնասիրելով համաշխարհային միտումները և հասկանալով, թե

որոնք են հեռանկարային մասնագիտությունները:

Օրինակ՝ այդ սկզբունքով վերջին տարիներին ներդրել ենք էլեկտրամոբիլային տրանսպորտի, արեւային էներգիայի վահանակների մոնտաժման, կաթիլային ոռոգման և այլ ոլորտներում մասնագիտությունները: Բացի այդ՝ մենք ստանում ենք թիրախային առաջարկներ ոլորտային գերատեսչություններից, օրնակ՝ ԱԻՆ-ը տալիս է կոնկրետ առաջարկ, թե որ ոլորտային ինչպիսի մասնագետներ կրթելու կարիք ունի տվյալ համակարգը:

Երբ աշխատաշուկայի պահանջները հստակ են, մասնագիտական կրթության կազմակերպումն ավելի դյուրին է: Բայց նաև շատ բարդ է, որովհետև կան բազմաթիվ գործոններ, որոնք խոչընդոտում են պլանավորման աշխատանքներն ամբողջ ծավալով իրականացնել, և տվյալների պակասը դրանցից մեկն է: Մեր աշխատաշուկան և մեր տնտեսավարողները չունեն պատկերացում, թե իրենց կողմից պահանջվող կարող արդյո՞ք բարձրագույն կրթություն պիտի ունենա, թե՞ բավարար է միջին մասնագիտական կրթությունը: Նույնիսկ եթե միջին, ապա ի՞նչ որակավորում պիտի ունենա:

— Ինչպե՞ս են ձևավորվում պետական պատվերով տեղերը:

— Պետական պատվերի ձևավորման ուղղությամբ նախորդ տարի բավականին աշխատանք կատարեցինք էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների հետ: Ձեւավորվել է աշխատանքային խումբ՝ փոխվարչապետի համակարգմամբ, որտեղ ներառված են շահագրգիռ գերատեսչությունները, որոնք պետք է պետական պատվերների ձևավորման տրամաբանությունն ու մեթոդաբանությունը վերլուծեն և հասկանան թե՛ բարձրագույն, թե՛ նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգերում: Ես կարծում եմ, որ այստեղ մենք կարիք ունենք ինստիտուցիոնալ կառույցի, որը պարբերաբար դա կիրականացնի: Կարիք ունենք ճիշտ գործիքների, որոնք միջոցով այդ տվյալները հնարավորինս ավելի հուսալի և ավելի արագ կարող ենք ստանալ: Նման գործիքներ կան, և ես կարծում եմ, որ եթե նպատակային որոշումներ կայացվեն, ապա կարող ենք այդ խնդրի լուծմանը գոնե աստիճանաբար հասնել:

Որպեսզի յուրաքանչյուրի դերը եւ առաքելությունը լինի իմաստավորված

սկիզբը՝ էջ 4

— Մշակվում է մասնագիտական ուսուցման եւ կրթության մասին նոր օրենքը, որը դեռեւս նախագծային փուլում է: Գիտեմ, որ ոլորտի բարեփոխման առումով մեծ հույսեր է կապվում այդ նախագծի հետ: Ձեր ակնկալիքով, օրինագիծը ե՞րբ կհասնի կառավարության եւ Աժ:

— Նախագիծը հրապարակվել է հոկտեմբերին, մինչեւ տարվա ավարտը մենք հնարավորություն կունենանք դա բնարկել կառավարությունում ու արդեն գալիք տարի քննարկումները կշարունակենք Ազգային ժողովում: Նախագծով ֆունդամենտալ փոփոխություն է առաջարկվում. սա ըստ էության նոր օրենք է, որը թույլ է տալիս ամրագրել այն մոտեցումները, որոնք արդեն մի քանի տարի փորձարկվում են մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգում: Դա առաջին հերթին աշխատանքի վրա հիմնված ուսուցման, դուրս կրթության, հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության, ինչպես նաեւ կառավարման եւ ֆինանսավորման նոր մոդելների ներդրմանն է վերաբերում:

Այստեղ թե՛ կառուցվածքի, թե՛ մնացած առումներով ֆունդամենտալ փոփոխություններ են նախատեսվում, ու այդ իմաստով՝ սա ոչ թե մեկ օրենք է, այլ օրենքների փաթեթ: Ենթադրվում է, որ համապատասխան փոփոխություններ պետք է լինեն աշխատանքային օրենսգրքում, որտեղ ԱՅՈՒ-ի փորձը կարող է դիտվել աշխատանքային ստաժ, եւ դա կմեծացնի մեր շրջանավարտների զբաղվածությունը, որը, ինչպես նշեցինք վերջում, կրթության մինչեւ 2030թգ զարգացման ծրագրի թիրախներից մեկն է: Փոփոխություններ պետք է արվեն նաեւ ՊՈԱԿ-ների մասին օրենքում, կրթության մասին օրենքում, քանի որ դրանք փոխկապված են:

Միաժամանակ ընթացիկ հարցերի հրատապ կարգավորման համար փոփոխություններ ենք նախատեսել գործող օրենքում: Այժմ շրջանառվում է Ազգային ժողովում եւ արդեն ստացել է գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացություն:

նր: Հրատապության կարգով այս փուլում փորձելու ենք առավելապես վարձատրության խնդիրները լուծել՝ ներմուծելով տարակարգի եւ կամավոր առեստավորման համակարգ:

— Նոր օրենքի նախագիծով առաջարկվող կարելու իմաստաբեկումնալ փոփոխություններից մեկը աշխատանքի վրա հիմնված ուսուցումն է, մյուսը՝ հաստատությունների ձեռնարկատիրական գործունեությունը: Սա ենթադրում է նաեւ հարկային համակարգի իրավակարգավորումների փոփոխություն: Սկզբունքային համաձայնություն պետեկամուտների կոմիտեի հետ ունեք:

— Օրենքի նախագիծը մշակման ընթացքում մի քանի փուլով քննարկումներ են եղել, որոնց մասնակցել են թե՛ պետեկամուտների կոմիտեի, թե՛ ֆինանսների նախարարության, թե՛ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության գործընկերները: Ունենք պատկերացում, թե ինչպես կարող ենք կարգավորել խնդիրները:

— Վարձատրության չափը ՄՎՈՒ-ի լուրջ խնդիրներից է. որակյալ մասնագետների ներգրավումը շատ բարդ է, որովհետեւ լավ մասնագետն այդ վարձատրությամբ չի ուզում աշխատել վարպետ կամ դասախոս: Ի՞նչ քայլեր են արվում այս ուղղությամբ:

— Գործող օրենքի փոփոխությամբ թե՛ առեստավորման, թե՛ տարակարգերի համակարգերը կգործեն: Բացի դրանից՝ մենք նախատեսում ենք վերանայել պահանջները, թե ովքեր կարող են դասավանդել ՄՎՈՒ հաստատությունում: Վերանայելու ենք բարձրագույն կրթության պարտադիր պահանջը, որը խոչընդոտ է հանդիսանում բազմաթիվ լավ մասնագետների համակարգում ներգրավմանը: Խնդիր ենք դրել ԱՅՈՒ ներդրմամբ ստեղծել հնարավորություն, որ գործատուների մասնագետները ներգրավվեն ուսուցման պրոցեսում:

— Այսինքն՝ վարձատրենք գործատուի կադրին, որ նա ՄՎՈՒ ուսանողի հետ աշխատանք տանի:

— Այո, որովհետեւ մենք խոսում ենք պրակտիկ հմտությունների զարգացման մասին, որն այս պարագայում առանցքային խնդիր է: Ուսուցման գործընթացում գործա-

տուի մասնագետներին ներգրավելու ճկուն մեխանիզմներ պետք է ունենանք, եւ ԱՅՈՒ-ն այդ հնարավորությունը տալիս է:

— Մասնագիտական կրթության կարելու խնդիրը տարիներ շարունակ համարվել է մասնագիտական կրթության ինքնարժեքի հաշվարկում: Ի՞նչ արժե, օրինակ, խոհարար, եռակցող կամ հաշվապահ պատրաստելը: Հստակ գնահատականներ, նույնիսկ հայտնի չէ, կան, թե՛ ոչ: Մենք այս ուղղությամբ քայլեր անելու ենք:

— Շատ կարելու խնդիր է, որը պետք է լուծենք ֆինանսավորման նոր կարգով: Օրինակ՝ խոհարարություն մասնագիտությունըգ էթե ուզում ենք դրա ինքնարժեքը հասկանալ, ապա բնականաբար պետք է հաշվի առնենք ուսեստի պատրաստման նյութածախսը: Փաստացի ներկայումս նյութական ծախսերի ֆինանսավորում չկա: Իսկ ինչպես պատրաստել խոհարար, եթե խոհարարը մթերք ձեռք բերելու հնարավորություն չունի:

Ինչպե՞ս կարելի է վարսահարդարում կամ կարի տեխնոլոգիա սովորել, եթե չունես հումք՝ ինչ-որ բան կարելու կամ գունաներկման աշխատանք կատարելու համար: Մշակվող ֆինանսավորման նոր կարգը պիտի իր մեջ ներառի ոչ միայն աշխատավարձը եւ կոմունալ վարձերը, այլ նաեւ նյութածախսի բաղադրիչները:

— Եթե նյութածախս տրվի, ապա եականորեն կբարձրանան պետությունից ակնկալվող ֆինանսավորման ծավալը: Պետությունը պատրաստ է դրան:

— Բնականաբար, մենք կարծում ենք, որ այլ տրամաբանությամբ չենք կարող առաջ գնալ:

— Խոսվում է նաեւ ՄՎՈՒ կրթությունը ներառական դարձնելու մասին: Ինչ քայլեր են արվելու այս ուղղությամբ:

— Ներառականության իմաստով շատ մեծ քայլերի կարիք ունենք:

Իրականում այս ոլորտում հաշմանդամություն ունեցող անձինք շատ ավելի մեծ հնարավորություններ ունեն՝ որոշակի կարողություններ ձեռք բերելու եւ զբաղվածություն ապահովելու համար: Մենք ունենք հաստատություններ, որտեղ հիմնականում մասնագիտական կրթությունը ստանում են

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք:

Աշխարհում կա համապատասխան փորձ, մենք հիմա քննարկում ենք ֆրանսիական մասնագիտական ուսուցման կենտրոնը ներառականության հիմքով ռեսուրս-կենտրոնի վերածելու հնարավորությունը, որտեղ փորձարկվելու եւ ներդրվելու են ներառական կրթության կազմակերպման մոդելները: Մենք ունենք պայմանավորվածություն, որ այստեղ նաեւ մեր մյուս մասնագիտությունների դասախոսները կկարողանան վերապատրաստվել, կկարողանան փորձաքննվել կրթական ծրագրերը: Այսպիսով՝ նաեւ անհրաժեշտ մենթորական աջակցություն կտրվի մյուս հաստատություններին: Սա աշխատանքի մի ուղղություն է: Մյուս ուղղությունը բնականաբար ֆինանսավորումն է, որը պիտի ապահովենք ֆինանսավորման կարգով:

— Վերջին հարցը. ի՞նչ կուզեիք ավելացնել՝ որպես համակարգի գնահատական:

— Ինչպես նշեցի, համակարգի պոտենցյալը շատ մեծ է: Մենք կարիք ունենք բարձրացնելու համակարգի տեսանկյունները, եւ սա առանձին ռազմավարության խնդիր է, կոմունիկացիոն ռազմավարության, որպեսզի ՄՎՈՒ հաստատությունները, ՄՎՈՒ ոլորտի մասնագիտություններն ու հնարավորությունները կարողանան իրոք հասանելի լինել, որպեսզի հասարակությունը իրագրված լինի: Կարծում եմ, որ կարիք ունենք դպրոցների եւ ՄՎՈՒ հաստատությունների համագործակցության ամրապնդման, եւ հուսով եմ, որ հանրակրթության նոր չափորոշիչով այդ հարցը կկարգավորվի, քանի որ դպրոցներում 7-րդ դասարանից մասնագիտական կողմնորոշման ակումբներ են գործելու:

Հուսով եմ, որ ՄՎՈՒ հաստատությունները կկարողանան ներկայացնել իրենց մասնագիտությունները, որպեսզի երեխաները կարողանան ավելի հստակ կողմնորոշում ստանալ եւ ճիշտ մասնագիտությունը ընտրել:

Հարցազրույց՝ Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Արցախի հետ կապը՝ սերտ եւ մշտական

«Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամը 44-օրյա պատերազմի հետեւանքով կորցրել է իր գործունեության տիրույթի մեծ մասը՝ Հայդուբի, Շուշիի, Քաշաթաղի ու Քարվաճառի շրջանների կորստով: Սա դեռ ամբողջը չէ:

Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների՝ թշնամու գերության մեջ հայտնված գյուղերի դպրոցներում եւս հիմնադրամը ոչ վաղ անցյալում հաջողությամբ էր իրականացնում իր ծրագրերը:

Պատերազմից թեւ թեւաբափ, բայց հիմնադրամը չի հրաժարվել Արցախում իր ներկայությունից: Եվ դա, անշուշտ, ծրագրի շահառու երիտասարդ մասնագետների հաստատականության շնորհիվ:

Հիմնադրամն այս օրերին նոյեմբերի 11-13-ը, Արցախում գալիք տարվա ծրագրով նոր շահառուների հավաքագրման աշխատանքներ է իրականացրել՝ մի շարք միջոցառումների ուղեկցությամբ:

Հավաքագրման խմբի անդամ Անժելա Գալստյանի տեղեկացմամբ կազմակերպվել են վրանային միջոցառումներ ԱրՊՀ-ում եւ Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան պուրակում՝ մասնակիցներին ընձեռելով միմյանց հետ ծանոթանալու եւ համագործակցության հնարավորություն:

Հիմնադրամի ներկայացուցիչ Մայիս Սիմոնյանի խոսքով՝ արցախի հետ կապը սերտ եւ մշտական է:

«Տեղի երիտասարդությունը հետաքրքրված է մեր ծրագրով: Այս ուսումնականում Արցախի տարբեր բնակավայրերի դպրոցներում աշխատում են 28 ուսուցիչ-առաջնորդներ: Հավաքագրում ենք այն թիմը, որը պետք է 2023-ին մուտք գործի Արցախ: Եվ նման միջոցառումները շարունակական են լինելու:

Հիմնադրամի առաքելությունը երիտասարդների համագալսին շարժման խթանումն է՝ հանուն Հայաստանի եւ Արցախի բոլոր երեխաների կրթական հնարավորությունների ընդլայնման: Ստեղծել այնպիսի պայմաններ, որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա բացահայտել իր ներուժը գերազանց կրթությամբ», - նշել է Մ. Սիմոնյանը:

Տեղեկացնենք նաեւ, որ մի շարք միջոցառումների շրջանակներում հիմնադրամի ներկայացուցիչները մասնակցել են Մարտունու շրջանի Կոլխոզաշեն համայնքի դպրոցում դասավանդող ուսուցիչ-առաջնորդ Աշոտ Գաբրիելյանի կազմակերպած «Կոլխոզ-Քվեստ»-ին:



Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ք. Ստեփանակերտ, մեր սեփական թղթակից

հանրապետական գիտաժողով

Սյունիքը՝ կրթության եւ մշակույթի օրրան

Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 55-ամյա հոբելյանին էր նվիրված «Սյունիքը կրթության եւ մշակույթի օջախ» խորագրով հանրապետական երկրորդ գիտաժողովը: Գիտաժողովում ընդգրկված ուշագրավ գեկուցումներով հերթական անգամ արժեւորվեց Սյունիքի պատմամշակութային ու գիտաուսումնական հարուստ ժառանգությունն ու ներուժը, ներկայացվեցին ու գնահատվեցին ձեռքբերումները, քննարկվեցին աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումներն ու մարտահրավերները, ՀՀ-ում ու Սյունիքի մարզում գիտության, կրթության ու մշակույթի արդի հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները:

Հանրապետական գիտաժողովին մասնակցեցին Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության ու արտերկրի շուրջ 25 գիտակրթական հաստատությունների ու հոգեւոր-մշակութային կազմակերպությունների, այդ թվում՝ Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Հայաստանի ազգային ազգարային համալսարանի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Հայաստանի ազգային գրադարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի, ՀՀ ԳԱԱ պատմության, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտների, Շվեյցարիայի Ֆրիբուրգի համալսարանի, Հայաստանի ազգագրության թանգարանի, Սանկտ Պետերբուրգի Պ. Լեսգաֆտի անվան ազգային պետական համալսարանի, Արցախի պետական համալսարանի, Արցախի Մեսրոպ Մաշտոց համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, «Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի եւ այլ գիտակրթական կառույցների շուրջ 60 գիտնականներ, մասնագետներ ու հետազոտողներ, որոնք իրենց գեկուցումներով համեստ ներդրում ունեցան հայրենի գիտության ու մշակույթի, Սյունիքի տարածաշրջանի տնտեսական զարգացման, ներուժի եւ հեռանկարային ուղղությունների ներկայացման, հայագիտական հիմնահարցերի ուսումնասիրման, ինչպես նաեւ տարբեր գիտաճյուղերի եւ միջգիտակարգային նպատակադիր զարգացման գործում:

Գիտաժողովը հանդիսավորությամբ բացեց եւ բացման խոսքով գիտաժողովի մասնակիցներին ու ներկաներին դիմեց Գորիսի պետական համալսարանի ռեկտոր **Տիգրան Վանդուցը**: Իր գեկուցման մեջ ռեկտորը, մասնավորապես, ասաց. «Մեծարժան մարզպետ, Արցախի հանրապետության արտաքին գործերի մեծարժան մարտար, գործընկեր կազմակերպությունների հարգարժան ներկայացուցիչներ, գիտաժողովի հարգելի մասնակիցներ, հյուրեր. սիրով ողջունում եմ ձեզ Գորիսի պետական համալսարանում բուհի հիմնադրման 55-ամյակին նվիրված «Սյունիքը կրթության եւ մշակույթի օջախ» խորագրով հոբելյանական գիտաժողովի շրջանակում, որ գիտակրթական ասպարեզում բուհի ձեռքբերումների ամփոփման ու արժեւորման հրաշալի հնարավորություն է: Ուստի, նախ ուզում եմ շնորհավորել բոլորիս՝ այս կարեւոր հոբելյանի առթիվ»: Այնուհետեւ, արժեւորելով Գորիսի պետական համալսարանի ներդրումը ՀՀ կրթամշակութային կյանքում, ռեկտորը ներկայացրեց բուհի անցած ճանապարհը, նշելով, որ հիմնադրումից ի վեր՝ գործելով Հայաստանի Հանրապետու-



թյան հեղինակավոր ուսումնական հաստատությունների համակարգում, ապա 2006 թվականից, որպես ինքնուրույն բարձրակարգ ուսումնական հաստատություն, Գորիսի պետական համալսարանն անցել է բարձրագույն կրթության բարեփոխումների հիանալի դպրոց, կուտակել բուհական համակարգի գործունեության հսկայական փորձ:

Լիազույնար նիստին գեկուցումներով հանդես եկան պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գեւորգ Ստեփանյանը** («Գորիս քաղաքի կրթական կյանքի պատմությունից (XIX դար-XX դարակիզը)»), պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Համո Սուքիասյանը** («Մեսրոպ Մաշտոցի անվան ՍՍՀՄ Բուրդուխտանի գավառների սահմանային վեճերը 1920-ական թվականներին»), քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գագիկ Թորոսյանը** («Աճառյանի պարունակող թափոնների եւ մազուրի վերամշակմանը հեղուկ վառելիքի արտադրության տեխնոլոգիա»):

Լիազույնար նիստից հետո գիտական նստաշրջանի երկօրյա աշխատանքը ծավալվեց հինգ մասնախմբերում՝ «Պատմություն, քաղաքագիտություն, իրավագիտություն», «Հնագիտություն, ազգագրություն, արվեստ», «Բանասիրական ուսումնասիրություններ», «Մանկավարժություն եւ հոգեբանություն», «Բնագիտական ուսումնասիրություններ»:

«Պատմություն, քաղաքագիտություն, իրավագիտություն» մասնախմբում ներկայացվեցին հետևյալ գեկուցումները. **Աբել Մանուկեան** (աստվածաբանական եւ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Ֆրիբուրգի համալսարան, Շվեյցարիայի Կրոնբերգի հորհրդի գլխավոր քարտուղար), «Կաթողիկե Եկեղեցու վարդապետութան ազդեցությունը հայ ու միջնադարում աստուածաբանական գրականության վրա՝ յանձնին Միաբանող Եղբայրներու եւ Գրիգոր վրդ. Տաթևացիի», **Գեւորգ Ստեփանյան**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ), «Հաբանող գավառի Չագեծորի հովտի ձեռագրական ժառանգությունը», **Ավետիք Հարությունյան** (իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, «Արցախ» գիտահետազոտական ինստիտուտ, Գորիսի պետական համալսարան) եւ **Մարիամ Գրիգորյան** (Արցախի Հանրապետության նախագահի օգնական), «2020 թ. նոյեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման» եռակողմ հայտարարության իրավաբանական ուժն ու հետեւանքները», **Ալեն Դեւոնյան** (քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երեւանի պետական համալսարան), «Սյունիքի

մարզի աշխարհաքաղաքական դերակատարումը ՀՀ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից», **Արման Մալոյան** (պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԿԳՄՍ «Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» (ԿԶՆԱԿ) հիմնադրամ), Սյունիքի մարզի նորակառույց եկեղեցիները (2001 – 2022 թթ.), **Հայկանուշ Պարսամյան** (ՀՀ փաստաբանների պալատ, Գորիսի պետական համալսարան), «Միջազգային պաշտպանություն հայցած ապաստան հայցողներին անվճար իրավական օգնության տրամադրումը Սյունիքի մարզում», **Կարեն Թախթաչյան** (պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ), «Մեծ Հայքի Արցախ եւ Սյունիք աշխարհների ժայռապատկերները», **Ստյոպա Պետոյան** (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ), «Նորահայտ փաստաթղթեր Գորիսի «Գաւառ» շաբաթաթերթի պատմությունից (Ռուսաստանի պետական պատմական արխիվ)», **Վուրդյան Գասպարյան** (Երեւանի պետական համալսարան, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ), «Հայռուսական դաշնակցային հարաբերությունները եւ Սյունիքի անվտանգության հիմնահարցը», **Հասմիկ Ամիրջանյան** (պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ), «Ձանգեղուրի գավառի կրթամշակութային կյանքի արտացոլումը «Գաւառ» շաբաթաթերթում (1909-1910 թթ.)», **Միքե Բունուց** (բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Գորիսի պետական համալսարան) եւ **Սաթենիկ Խուրշուդյան** (ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ), «Հին Գորիսը, տեղադրության հարցը եւ նորահայտ արձանագրությունները», **Գայանե Շաբունց** (Գորիսի պետական համալսարան), «Խնձորեսկ գյուղի հիշատակությունները «Գաւառ» շաբաթաթերթում», **Ժիրայր Միրումյան** (Գորիսի պետական համալսարան), «Մահեւանյան իշխանական տոհմը», **Հովիկ Ավանեսով** (Արցախի Մեսրոպ Մաշտոց համալսարան), «Աղբեջանի տարածքային նկրտումները Սյունիքի նկատմամբ եւ դրանից բխող մարտահրավերները» (հեռավար):

Ուշագրավ գեկուցումներ էին ներկայացված նաեւ հաջորդ՝ «Հնագիտություն, ազգագրություն, արվեստ», «Բանասիրական ուսումնասիրություններ», «Մանկավարժություն եւ հոգեբանություն», «Բնագիտական ուսումնասիրություններ» մասնախմբերում:

Գիտաժողովի փակման լիազույնար նիստի ընթացքում ԳՊՀ ռեկտոր Տիգրան Վանդուցը, ամփոփելով լսված գեկուցումները, շնորհակալություն հայտնեց երկօրյա արդ-

յունավետ աշխատանքի համար եւ հույս հայտնեց, որ գիտաժողովին մասնակցած կազմակերպությունների եւ նրանց ներկայացուցիչների հետ մասնագիտական համագործակցությունը կլինի շարունակական:

Այնուհետեւ առանձին մասնախմբերում նիստերը նախագահողները եւս ամփոփեցին իրենց մասնախմբերում լսված գեկուցումները, ներկայացրին մասնախմբային քննարկումների ընթացքն ու արդյունքները: Կարեւորելով նման թեմատիկայով գիտաժողովի կազմակերպումը նրանք բարձր գնահատեցին գիտաժողովը թե՛ կազմակերպական, թե՛ գիտական նշանակության տեսանկյունից: Մասնակիցները առաջարկեցին, որ թեմատիկ ուղղվածությամբ մասնատիպ գիտաժողովների կազմակերպումը Սյունիքում լինի շարունակական ու նպատակային:

Գիտաժողովը պատշաճ մակարդակով կազմակերպելու եւ անցկացնելու համար ԳՊՀ-ի ռեկտորը շնորհակալություն հայտնեց գիտաժողովի կազմակերպիչ անդամներին, բոլոր գործընկեր կազմակերպություններին, բուհերին՝ հավաստիացնելով, որ նրանց միջեւ համագործակցությունը կլինի շարունակական եւ կարդուցակալի նոր ձեռքբերումներով:

Նշենք նաեւ, որ գիտաժողովի կազմակերպական աշխատանքները գերազանցորեն ու անմնացորդ նվիրումով էր համակարգում ԳՊՀ գիտական քարտուղար **Թեմիմա Մարությանը**: Իր ամփոփիչ խոսքում նա, շնորհակալություն հայտնելով մասնակիցներին Սյունիքի մայր բուհի, գիտաժողովի թեմատիկ ուղղվածության հանդեպ ցուցաբերած հետաքրքրության եւ մասնակցության համար, փաստեց, որ գիտաժողովի նիստերում հնչած գեկուցումները կարեւոր ներդրում են Սյունիքի հոգեւոր ու նյութական հարուստ ժառանգության ուսումնասիրման, վերաթելումն ու հանրահռչակման գործում:

Լիախույս ենք, որ արդեն ավանդույթ դարձած ԳՊՀ-ի գիտաժողովները, որոնք աչքի են ընկնում թեմատիկ բազմազանությամբ եւ միջգիտակարգային բովանդակությամբ, ինչպես նաեւ հետաքրքիր եւ նոր գաղափարներ ծնող քննարկումներով, լինելու են պարբերական եւ շարունակելու են արդյունավետ համագործակցությունը արտասահմանյան, Արցախի եւ ՀՀ-ի ակադեմիական ու բուհական հաստատությունների գիտնականների ու գիտակարգերի միջեւ:

Գիտաժողովի աշխատանքները հաճելիորեն համատեղվեցին գեղարվեստական միջոցառումների հետ: Գիտաժողովի շրջանակներում բացվեց նաեւ հոբելյանական ցուցահանդես, որում ներկայացված էին ինչպես սյունեցի հայտնի գեղանկարիչների գործերը, այնպես էլ ԳՊՀ-ի «Կերպարվեստ» մասնագիտությամբ մասնագիտացող ուսանողների եւ շրջանավարտների լավագույն գեղանկարները: ԳՊՀ-ի հիմնադրման հոբելյանը նշանավորվեց նաեւ մեկ այլ խորհրդանշական իրադարձությամբ: Վերջերս կյանքին իրաժեշտ տված քանդակագործ, գեղանկարիչ, ԳՊՀ-ի վաստակաշատ դասախոս Միխայել Ղուկասյանի գավառները, իրականացնելով իրենց գեղանկարիչ հոր ցանկությունը, վերջինիս վրձնած ու ակնավոր սյունեցի Գուսան Աշոտին պատկերող կտավը նվիրեցին համալսարանին:

Գիտաժողովի շրջանակներում իրականացվեցին նաեւ պատմաճանաչողական շրջայցեր (Ակսել Բակունցի տուն-թանգարան, Տաթևի վանական համալիր):

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու

Գեղագիտական

Խմբերգային տոն՝ Վայոց Ձորում

Դպրոցահասակ երեխաների երաժշտական մտածողության ծեսավորումը...


Սովորողի գեղագիտական դաստիարակությունը դպրոցի առաջնահերթ խնդիրներից է...

Երեխաներին երաժշտարվեստի հետ ծանոթացնելու և այն հասկանալի ու մատչելի դարձնելու լավագույն միջոցը...

Երգչախմբերի ելույթները նշանակալի իրադարձություն են երեխաների կյանքում...

Վերջերս մի այդպիսի տոն էր Վայոց ձորի մարզում գեղատեսիլ Նորավանքի տարածքում...

Այդ օրը Նորավանքի գեղատեսիլ բարձունքում դողանջում էին հարյուր քսան երեխայի եղեգնածորի և յոթ հեռավոր ու



սահմանամերձ գյուղերի՝ Արենիի, Զիվայի, Խաչիկի, Մալիշկայի Քարազխի, Ելփինի, Աղնջածորի դպրոցականների զրնգուն ծայերը...

Շատ տպավորիչ էր փառատոնի սկիզբը, որը սկսվեց Վայոց ձորի թեմի հոգևորականների օրհնությամբ:

Մի քիչ նախապատմություն. ամիսներ առաջ, ստանալով հովանավորների կողմից իր առաջարկած գաղափարի հավանությունը...

Սկզբում դրանք բավականին դժվար են ընթացել, քանի որ երեխաները երբեք չեն երգել երգչախմբում, առավել ևս հանրակրթական դպրոցում...

Ռ.Մավիսակալյանի գեղեցիկ մանկական խմբերգերին, հաղորդակցվել և ինքնարտահայտվել դրանցով...

Փառատոնն իր այցելությանը պատվեց նաև «Չայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի ղեկավար, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի տնօրեն, Տիգրան Դեբեթյանը...

Պարզ է, որ փոքրիկ երգիչները, հաղորդակցվելով հայ ազգային երգարվեստին, կյանքում ինչ մասնագիտություն էլ որ ընտրեն...

Չամերգին ներկա էին Վայոց ձորի մարզպետարանի աշխատակիցներ, համայնքների ղեկավարները, դպրոցների տնօրենները...

յան-Երկիրն հայրենի, Է. Չովհաննիսյան-Սարգսրապատ, Ռ.Մավիսակալյան-Ջան Չայաստան և այլ երգեր:

Երգչախմբի գեղեցիկ ելույթը խմբավար Ս. Սիմոնյանի լարված ու քրտնաջան աշխատանքի վերջնարդյունքն էր: Ս. Սիմոնյանը, ավարտելով կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետը...

Չամերգը եզրափակեց Չայ առաքելական եկեղեցու Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը:

Պարզ է, որ փոքրիկ երգիչները, հաղորդակցվելով հայ ազգային երգարվեստին, կյանքում ինչ մասնագիտություն էլ որ ընտրեն, կլինեն ազգային արժեքները կրող, գնահատող, փոխանցող, կլինեն բարեկիրթ ու պատասխանատու, ցանկություն կունենան հաճախել համերգասրահներ, թանգարաններ, թատրոն և կղառնան հայրենիքին...

Չամերգին ներկա էին Վայոց ձորի մարզպետարանի աշխատակիցներ, համայնքների ղեկավարները, դպրոցների տնօրենները: Նախագծին աջակցելու համար Ս.Սիմոնյանը խորին շնորհակալություն հայտնեց Եղեգնածոր, Արենի և Եղեգիս համայնքների ղեկավարներին, դպրոցների տնօրեններին, ծնողներին, ուն համայնքում շնորհիվ իրականացվեց այս իրաշալի փառատոն-համերգը...

Այս յուրահատուկ փառատոնն ավարտվեց հյուրասիրությամբ՝ յուրաքանչյուր գյուղ բերել էր իր բերքն ու բարիքը, իրենց աճեցրած մրգերը և պատրաստած ավանդական գաթան:

Գայանե ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



Փորձիր լրացնել

Մի բուն գիտելիք

Ուղղահայաց

1. Իտալացի հայտնի դերասանուհի՝ ...Լուլբրիջիդա: 2. Վերածննդի իտալացի նշանավոր գիտնական, բոլոր ժամանակների մեծագույն նկարիչ Լեոնարդո դա Վինչիի հայտնի նկարը՝ Մոնա ...: 3. Ֆրանսիացի կոմպոզիտոր, «Ռոմեո եւ Ջուլիետ», «Ֆաուստ» օպերաների հեղինակը: 4. Ջրային արջ: 6. Ռումինահայ հռչակավոր բժշկուհի, որի անունը հունաստանում քանդակված է Հիպոկրատի արձանին Աննա ...: 7. Հնդկական օվկիանոսի ծոցերից: 8. Սփյուռքահայ գեղանկարիչ՝ Ոստանիկ Ադոյան կամ ... Գորկի: 10. Քիմիական տարր՝ գազ: 11. Տիրեթի հոգեւոր առաջնորդը՝ Դալայ ...: 12. 1908 թ., 1948 թ., 2012 թ. ամառային Օլիմպիական խաղերի քաղաք Մեծ Բրիտանիայում: 14. Գետ, որին անվանում են Բայկալի դուստրը: Նրանում սառույցը առաջանում է ոչ թե մակերեսին, այլ՝ հատակին: 15. Նեղուց, որ միացնում է Թասմանի ծովը եւ Մեծ Ավստրալական ծոցը: 19. Հրաշագեղ երկիր: Նրա կենտրոնում էր Աստված տնկել դրախտը: 20. Կառույց օդանավերի տեխնասարկման եւ պահպանման համար: 21. Առաջին հայկական հնչյունային ֆիլմը: 25. Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի արտադրած առաջին սերնդի համակարգիչը: 26. Արեւմտահայ ազատագրական պայքարի մեծագույն ղեկավարներից՝ ...Դժոխք: 27. Շախմատի աշխարհի 8-րդ չեմպիոնը (1960-1961): 28. Սագ բառի հոմանիշը: 29. Լիճ (քաղցրահամ) Հյուսիսային Ամերիկայում: 30. Գետ՝ Վոլգայի աջ «ծեռքը», Անգարայի վտակը: 31. Հայկական այբուբենի «Ի» տառի անվանումը: 32. Պոչ կամ ...: «Աղվեսն եկել, նստել դեզին, ...ն ծռել վզին» (Հ. Թումանյան): 33. Քնարակական ժանրի ստեղծագործություն: 34. Անտառային չվող թռչուն, որի եզր ձվեր է դնում ուրիշ թռչունների բներում: 39. Գետ Աֆրիկայում, որն համարվում է աշխարհի ամենաերկար գետերից մեկը: 41. Արեւմտահայ գրող՝ Մեծ եղեռնի զոհ՝ Երվանդ Սրմաքեշխանյանի գրական կեղծանունը: 42. Գետ, որի ափերից մեկը գտնվում է Երոպայում, իսկ մյուսը՝ Ասիայում: 43. Հայ գրող, «Շաքե» պոեմի հեղինակը: 44. Ֆրանսիացի գրող Բալզակի փիլիսոփայական ստեղծագործությունների շարքին պատկանող վեպը՝ «...ի կաշին»: 47. Գերմանացի մաթեմատիկոս (1777-1855 թթ.) Կառլ ..., ում համարում են «Մաթեմատիկայի թագավոր»: 49. Հայկական ազգային օպերայի հիմնադիր Արմեն Տիգրանյանի հայտնի օպերան: 50. Կանադայի եւ ԱՄՆ-ի սահմանին գտնվող՝ աշխարհի ամենամեծ քաղցրահամ լիճը: 53. Ծառատեսակ, որի փայտից Նոյը պատրաստել էր իր տապանը: 55. Գերմանացի փիլիսոփա՝ Մաքս ..., նրա անունով է կոչվում մագնիսական հոսանքի միավորը: 56. Գերմանացի բանաստեղծ, հրապարակախոս (1797-1856 թթ.): 59. Եվ մոլորակ եւ քիմիական տարր: 60. Իտալացի երգահան Վերդիի օպերան, որն գրվել է Սույեզի ջրանցքի բացման առթիվ: 61. Միջնադարի հայ մեծ բանաստեղծ: 62. Կինոյի եւ թատրոնի ֆրանսիացի դերասան, կինոաստղ եւ 1960-1980 թթ. սեքս խորհրդանիշ՝ ... Դեյլոն:

Հորիզոնական

5. Պտղաբերության, մայրության աստվածուհին Հին Եգիպտոսում: 7. Ամբարտակ Նեղոս գետի վրա: 8. Հայտնի ամերիկահայ կոմպոզիտոր՝ ... Հովհաննես (... Չաքմաքչյան): 9. Կենդանի, որի արյունը չեզոքացնում է օձի թույնը: 13. Հին հայկական հեթանոսական տաճար: 16. Վայր ընկնող աշտարակի քաղաքը: 17. Ֆրանսահայ նշանավոր կինոռեժիսոր՝ Հայրց Գեղասպանության մասին պատմող «Մայրիկ» ֆիլմի ռեժիսորը՝ ... Վերնոյ (Աշոտ Մալաքչյան): 18. Արցախյան մարտերում նահատակված հայ ժողովրդի քաջարի զավակներից, ՀՀ եւ Արցախի հերոս (անունը): 21. Առասպելական թեւավոր նժույգ հին հունական դիցաբանության մեջ: 22. Իտալացի միջնադարյան բանաստեղծ՝ ... Ալիգիերի: 23. Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, Աղբյուր Սերոբի կինն ու զինակիցը: 24. Սեղունների խմբի անվանումը: 27. Հնագույն բանաստեղծություն: 30. Հայ ազատագրական շարժման մեծ երախտավոր: 33. Հրանոթից կրակելու ռազմամթերքի տեսակ: 35. Հայրց Արշակունի թագավոր, ում կինը՝ Սանդուխտը ասել է. «Ավելի լավ է շինականի կին լինել, քան՝ դատերասպան արքայի»: 36. Համաշխարհային 2-րդ պատերազմի ժամանակ Ամերիկյան ատոմային ռմբակոծության ենթարկված քաղաք ճապոնիայում: 37. Ավտոբուսի մակնիշ՝ «...- 695»: 38. Հայաստանի մայրաքաղաքներից, որին պատմիչ Կիրա-

կոս Գանձակեցին անվանել է «Հազար ու մեկ եկեղեցիների քաղաք»: 40. Լատինական այբուբենի տառի անվանում: 45. Հերկելու, վարելու երկրագործական փայտե գործիք՝ գութան, չուք կամ ...: 46. Լեռնագագաթ Արցախում: 48. Ամենասակավաջուր ծովը (խորությունը՝ 8-13 մ): 51. Ջրվեժ Վենեսուելայում, որի բարձրությունը 20 անգամ գերազանցում է Նիագարային: 52. Հռոմեական կայսր (54-68 թթ.): 54. Ֆրանսիացի մաթեմատիկոս՝ Էտյեն ...: 57. Ատաղծագործի գործիք, որը կացին է հիշեցնում: 58. Հռոմեական պետական, քաղաքական եւ ռազմական գործիչ (մ. թ. ա. 100-մ. թ. ա. 44), «Եկա, տեսա, հաղթեցի» խոսքերի հեղինակը: 63. Ականավոր հայ ռազմական գործիչ (անունը), ԽՍՀՄ գեներալ մայոր (1943 թ.), 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատարը: 64. Վրաստանի դրամը: 65. Լեռնաշղթա Հարավային Ամերիկայում, որի լեռնագագաթն է՝ Ակոնկագուա (6960 մ): 66. 5-րդ դարի հայ պատմիչ, 451 թ. հայկական հերոսամարտի՝ Վարդանանց պատերազմի ականատես պատմիչ:

Կազմեց՝ Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍԱՆԸ

16.11. 2022թ.

Ա Ձ Դ

Հայտարարություն

Վարդենիսի «*Բաղեյան*» պետական քոլեջ ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար։

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
73 քաղաքացիությունը.
ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում կառավարման խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.
5) ինքնակենսագրություն:
6) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը
Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բժօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են **2022թ. նոյեմբերի 16-ից մինչև ղեկտենբերի 6-ը ներառյալ ամեն օր, ժամը՝ 9:00-ից մինչև ժամը 18:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից։**

Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի ղեկտենբերի 15-ին, ժամը՝ 11:00-ին**, Վարդենի «*Բաղեյան*» պետական քոլեջում, հասցեն ԳԳ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 5։

Տեղեկությունների համար զանգահարել (077) 09-99-20 հեռախոսահամարով, էլ. Հասցեն` vsc@inbox.ru։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ԳԳ ԿԳՄՍՆ «Երեւանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «*Ձեռներեցու-թյուն*» (360 դասաժամ) առարկայի դասավանդող մանկավարժի թափուր տեղի համար։

Մրցույթը անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին։ Մասնակիցը հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդելիք առարկային (մոդուլին) եւ մանկավարժական գործունեությանը, վիճակահանությանը ընտրում է հարցատոնս, որը բաղկացած է հինգ հարցից, որոն կարող են ներառվել նաեւ 1-3 գործնական հարցեր եւ կարող է առանձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1) , մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասինե ԳԳ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն
- այլ պետությունների քաղաքացիները՝ ԳԳ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ԳԳ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույթը տեղի կունենա **ղեկտենբերի 2-ին՝ ժամը 14:00-ին**, Երեւանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն ք. Երեւան, Բեկնազարյան 5։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 35-81-25, (099) 11-05-51 հեռախոսահամարներով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ԳԳ ԿԳՄՍՆ «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (814 ժամ) մանկավարժի թափուր տեղի համար։

Թափուր տեղի համապատասխանության նկատմամաք սահմանված պահանջները՝
մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, որակավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ։

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
- դիմում (Ձեւ 1),
- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 4),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։

Փաստաթղթերն ընդունվում են **2022 թ. նոյեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույթը տեղի կունենա **ղեկտենբերի 2-ին՝ ժամը 14:00-ին**, «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցեն ԳԳ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աթարբեկյան 156։

Տեղեկությունների համար զանգահարել (0235) 2-40-81, (093) 01-37-80 հեռախոսահամարներով։

Հայտարարություն

ԳԳ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «*Մաթեմատիկա*» առարկայի (480 դասաժամ) բարձրագույն մասնագիտական կրթության որակավորմամբ դասախոսի թափուր տեղի համար։

Մրցույթին մասնակցելու համար անձը Հաստատություն է ներկայացնում.

1) դիմում (Ձեւ 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձեւ 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։
Փաստաթղթերն ընդունվում են **նոյեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույթը տեղի կունենա **ղեկտենբերի 2-ին՝ ժամը 14:00-ին**, Արարատի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Արարատ, Խանճյան 67։

Տեղեկությունների համար զարգահարել՝ (0234) 4-41-01, (099) 97-27-47 հեռախոսահամարներով։
Էլեկտրոնային հասցեն՝ collegearat@mail.ru։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ԳԳ Արարատի մարզի «*Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (25 դասաժամ), մաթեմատիկայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԳԳ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ԳԳ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ԳԳ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ԳԳ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները հանձնատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայցված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույթը տեղի կունենա **ղեկտենբերի 5-ին՝ ժամը 14:00-ին**, ԳԳ Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն գ. Մարմարաշեն, Երեւան-Արտաշատ խճուղի 71։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 97-64-80 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ԳԳ Տավուշի մարզի «*Դիլիջանի հ. 4 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ) թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԳԳ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ԳԳ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ԳԳ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ԳԳ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները հանձնատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայցված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **նոյեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույթը տեղի կունենա **ղեկտենբերի 1-ին՝ ժամը 14:00-ին**, ԳԳ Տավուշի մարզի Դիլիջանի հ. 4 հիմնական դպրոցում, հասցեն ք. Դիլիջան, Շահունյան 6։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0268) 2-26-07, (094) 23-03-69 հեռախոսահամարներով։



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ԳԳ Կոտայքի մարզի «*Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի հասարակագիտության (6 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԳԳ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ԳԳ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ԳԳ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ԳԳ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները հանձնատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայցված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **նոյեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույթը տեղի կունենա **ղեկտենբերի 5-ին՝ ժամը 14:00-ին**, ԳԳ Կոտայքի մարզի Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն Նոր Հաճն համայնք, գ. Թեղենիք, 1-ին փ. 20։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224) 6-13-84, (098) 10-63-06 հեռախոսահամարներով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ԳԳ Սյունիքի մարզի «*Կապանի Հրամտ Ոսկանյանի անվան հ. 12 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (21 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԳԳ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ԳԳ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ԳԳ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ԳԳ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները հանձնատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայցված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև նոյեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույթը տեղի կունենա **ղեկտենբերի 2-ին՝ ժամը 14:00-ին**, ԳԳ Սյունիքի մարզի Կապանի Հրամտ Ոսկանյանի անվան հ. 12 հիմնական դպրոցում, հասցեն ք. Կապան, Բարաբաբուն թաղամաս, 2/1 չ.։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 05-10-77, (0285) 2-47-90 հեռախոսահամարներով։

Բաժանորդագրվի՛ր, կարդա՛ «Կրթություն»

Օվկիանոսից այն կողմ՝ հեռավոր Ամերիկայում, օվկիանոսից այս կողմ՝ Եվրոպայում, հյուսիսում՝ Ռուսաստանում, հարավում՝ արաբական երկրներում, Ավստրալիայում, թե ամենուր, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր թերթը՝ մանավանդ, եթե այն մասնագիտական է եւ ուղղված է հենց իրեն... Հայաստանում, սիրելի՛ Ընթերցող, այդ թերթը քեզ համար «Կրթություն»-ն է՝ մեզանում պահպանված թերեւս միակ մասնագիտական թերթը, 1932 թվականից ի վեր («Կուլտուրական ֆրոնտ», «Սովետական դպրոց», «Դպրություն», «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անվանումով):

Գիտե՛ս, սիրելի՛ Ընթերցող, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել եւ ուսուցչի, մանկավարժի, եւ նաեւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կլուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոսափողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթերթ չես, հրատապ լրատվություն չես՝ հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խորթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզիչն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքե՛ն, դրականը դրվատող ու հասարակություն կրթող... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով գայթակղող:

Սիրելի՛ Ընթերցող, ինչ նախասիրություններ էլ որ ունենաս, համոզված եղիր, «Կրթությունը» անարատ հոգեւոր սնունդ է տալու Քեզ, եւ ոչ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ մեր հանդիպումները լինեն շարունակական եւ գոյատեւի Քո՛ թերթը՝ մի օր լավ, մի օր գերազանց, մի օր էլ պակաս կամ թերի, բայց Քո՛ թերթը, որ ամեն չորեքշաբթի հայտնվում է Քո՛ ձեռքերում, եւ որի ճակատագիրը դարձյալ Քո՛ ձեռքերում է ուղղակիորեն, բաժանորդագրվի՛ր, կարդա՛... Սիրի՛ր Քո թերթը, որ այն օրավոր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դու ես՝ եւ բարոյապետ, եւ նյութապետ: Քո՛ բաժանորդագրությամբ, կրպակներից Քո՛ գնումներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատեւի, դառնա փնտրված ու սիրված թերթ... Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր, կարդա՛ «Կրթություն», միշտ ունեցի՛ր Քո թերթը...

«Կրթություն» կարելի է բաժանորդագրվել «Հայփոստի» եւ «Հայմամուլի» բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար պետք է վճարել 10400 դրամ եւ ստանալ բոլոր 52 համարները:

Վեց ամսվա բաժանորդագրական գինը 5200 դրամ է (26 համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել 2600 դրամ (համապատասխանաբար կստանաք 13 համար):

Այլ մանրամասնությունների համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:



Շաբաթաթերթ «Krtutun» (education) weekly «КрТутун» (образование) еженедельник 12.10.2005

Մայրաքաղաք

Բիայնիլի-Վան, Երեւոնի-Երեւան... Քանի՞ դար կա այս անցումների միջեւ... Նախիջեւան-Երեւան-Իջեւան... Ե՛րբ է Նոյն անցել այս ուղերթով...



«КрТутун» еженедельник 05.10.2005թ. չորեքշաբթի թիվ 28 (175)



«КрТутун» еженедельник 18.08.2005թ. հինգշաբթի թիվ 21 (14)



ՀԻՄՆԱԳԻՐ՝
ՀՀ ԿԳՄՍՆ
«Կրթություն» թերթի
խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ս-049349,
Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ Մեծի 67,
E-mail: krtutun@yandex.ru
Հեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ Մեծ»
հրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 2000:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝
15.11.2022թ.
Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ